**«Հաստատված է՝»**
**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և կրիմինալիստիկայի ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1**
**ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան**

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| **ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն |
| | | |
| **ՄՈԴՈՒԼԻ ԴԱՍԻՉ** | | ԻՐԳ-4-10-017 |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Ոստիկանական միջին մասնագիտական կրթության |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Ոստիկանական գործ |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** | | Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն<br>E-mail: OHGKRIM@mail.ru |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Ս. Ասլանյան հեռ 091-40-27-30<br>aslanyan.sona71@gmail.com |
| | | |
| **ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 2-րդ կուրս 1-ին կիսամյակ |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | Ոստիկանության սպա |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱԽԱՏԱՆՔՆԵՐ** | | «Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 32 ժամ, որից 16 ժամ դասախոսություն, 14 ժամ սեմինար, 2 ժամ գործնական: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, լրացնում է ձևաթղթեր, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում եզրափակիչ գնահատմամբ: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Կրիմինալիստիկա» և «Քրեական դատավարություն» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | «Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են դատական բժշկության հիմնարար խնդիրները, դատաբժշկական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները, դատահոգեբուժական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները: |

| | | |
|---|---|---|
| **ՆՊԱՏԱԿ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ դատական բժշկության հիմնարար խնդիրների, դատաբժշկական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքների, դատահոգեբուժական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքների վերաբերյալ: |
| **ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի խնդիրներն են՝<br>1) ներկայացնել դատական բժշկության հիմնարար խնդիրները,<br>2) ներկայացնել դատաբժշկական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները,<br>3) ներկայացնել դատահոգեբուժության հիմնարար խնդիրները,<br>4) ներկայացնել դատահոգեբուժական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները: |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br><br>***Կարողանա՝*** | | 1) տարբերակել առողջության քայքայումը և մահը սուր թթվածնային անբավարությունից, ֆիզիկական գործոնների և թունավոր նյութերի ազդեցությունից,<br>2) ներկայացնել դատաբժշկական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները,<br>3) ներկայացնել վնասվածքների բժշկական բնութագիրը, դրանց դասակարգումը՝ կախված ծագման մեխանիզմից,<br>4) ներկայացնել հրազենային վնասվածքների դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները,<br>5) ճիշտ բնորոշել մարմնական վնասվածքների ծանրության աստիճանների չափորոշիչները,<br>6) թվարկել և բացատրել է իրեղեն ապացույցների դատաբժշկական ուսումնասիրության օբյեկտները,<br>7) տարբերել վաղ և ուշ դիակային երևույթները.<br>8) նկարագրել դատահոգեբուժական փորձաքննության կարգը և առանձնահատկությունները,<br>9) ներկայացնել դատահոգեբուժական փորձաքննության դատավարական և կազմակերպչական հիմունքները,<br>10) տարբերել դատահոգեբուժական փորձաքննության անցկացման տեսակները: |

| | | |
|---|---|---|
| **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** | | |
| **Հիմնական** | | 1) «Դատական բժշկություն» Վարդանյան Շ.Տ. Երևան 2010թ.<br>2) «Դատական բժշկություն» Մուսաելյան Վ.Տ. Երևան 2010թ.<br>3) «Հոգեբուժություն» Մելիք-Փաշայան Ա.Է. Երևան 2010թ. |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1) «Судебная медицина и психиатрия» А.В.Датий 2009г.<br>2) «Судебная медицина в вопросах и ответах» В.И.Акоиев 2012г.<br>3) «Наркологиа» А.И.Минко 2014г.<br>4) «Психиатрия» Н.М.Жариков 2014г. |

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ**

Բաղադրիչ 1 (Քայլ 1) Հարց ու պատասխան
Բաղադրիչ 2 (Քայլ 2) Հարց ու պատասխան

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ**

| Գնահատման միավոր | Գնահատականը տառանշումով |
|---|---|
| 9-10 | Գերազանց |
| 7-8 | Լավ |
| 4-6 | Բավարար |
| 0-3 | Անբավարար |
| 0 | Չներկայացած |
| Ստուգարքային գնահատում | Ստուգված / Չստուգված |

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ**

Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:
Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:
Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝
ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.
բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.
գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.
դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:

**ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:

**Ներկայություն**

**Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ**

**Ինքնուրույն և գործնական**

Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:

| | | |
|---|---|---|
| **աշխատանքներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվե-լը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել ա-ռանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակա-հատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

## ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

| ՕՐ/ՇԱԲԱԹ | ԹԵՄԱ/ԺԱՄ | ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ | ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ | ԳՆԱՀԱՏՈՒՄ |
|---|---|---|---|---|
| **1-ին շաբաթ** | **Դատական բժշկության առարկան, խնդիրները, դատավարական և կազմակերպչական հիմունքները**<br>դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել դատական բժշկության առարկան և նպատակները, փորձաքննության տեսակները, դատավարական և կազմակերպչական հիմքերը:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) դատական բժշկության առարկան<br>2) դատական բժշկության խնդիրները<br>3) դատական բժշկության փորձաքննության տեսակները<br>4) դատական բժշկության դատավարական և կազմակերպչական հիմքերը | Ներկայացնում է դատական բժշկության դերը և նպատակները, փորձաքննության տեսակները, դատաբժշկական փորձագետի իրավունքներն ու պարտականությունները: | Իմանա դատական բժշկության դերը և խնդիրները, փորձաքննության տեսակները, դատաբժշկական փորձագետի իրավունքներն ու պարտականությունները: |
| **2-րդ շաբաթ** | **Դատական բժշկության առարկան, խնդիրները, դատավարական և կազմակերպչական հիմունքները**<br>սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը դատաբժշկական փորձաքննությունների տեսակների, դատաբժշկական փորձագետի իրավունքների ու պարտականությունների, դեպքի և դիակի հայտնաբերման վայրի զննման վերաբերյալ:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) դատական բժշկության առարկան<br>2) դատական բժշկության խնդիրները<br>3) դատական բժշկության փորձաքննության տեսակները<br>4) դատական բժշկության դատավարական և կազմակերպչական հիմքերը | Ներկայացնում է դատական բժշկություն առարկան, դատաբժշկական ծառայության դատավարական և կազմակերպչական հիմունքները, փորձաքննության տեսակները, օբյեկտները և եղանակները, դատաբժշկական փորձագետի իրավունքներն ու պարտականությունները, դեպքի և դիակի հայտնաբերման վայրի զննում, դատաբժշկական փաստաթղթերի կազմման կանոնները: | Ներկայացնի դատական բժշկության դերը և նպատակները, փորձաքննության տեսակները, դատաբժշկական փորձագետի իրավունքներն ու պարտականությունները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **3-րդ շաբաթ** | **Ընդհանուր մահաբանություն: Մահվան ընթացքը, մահը, մահվան դատաբժշկական դասակարգումը**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել մահվան եղանակները, դիակային երևույթները, արտաշիրիմումը:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) մահվան ընթացքը<br>2) դիակային երևույթները<br>3) անհայտ անձանց և մասնատված դիակների դատաբժշկական փորձաքննությունների առանձնահատկությունները<br>4) արտաշիրիմում | Ներկայացնում է մահվան եղանակները, դիակային երևույթները, անհայտ անձանց և մասնատված դիակների դատաբժշկական փորձաքննությունների առանձնահատկությունները: Փորձաքննությունների անցկացման կարգը: | Իմանա մահվան եղանակները, դիակային երևույթները: |
| **4-րդ շաբաթ** | **Ընդհանուր մահաբանություն: Մահվան ընթացքը, մահը, մահվան դատաբժշկական դասակարգումը**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը մահվան փաստի, մահվան առանձնային հաստատող նշանների, մահվան դատաբժշկական դասակարգման, բռնի և ոչ բռնի մահվան, դիակային երևույթների մասին:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) մահվան ընթացքը<br>2) դիակային երևույթները<br>3) անհայտ անձանց և մասնատված դիակների դատաբժշկական փորձաքննությունների առանձնահատկությունները | Ներկայացնում է մահվան փաստի հաստատումը, մահվան առանձնային հաստատող նշանները, մահվան դատաբժշկական դասակարգումը, բռնի և ոչ բռնի մահ, դիակային երևույթներ, դիակի դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները: | Ներկայացնի մահվան փաստի հաստատումը, մահվան առանձնային հաստատող նշանները, մահվան դատաբժշկական դասակարգումը, բռնի և ոչ բռնի մահ, դիակային երևույթներ, դիակի դատաբժշկական փորձաքննություն: |
| **5-րդ շաբաթ** | **Ընդհանուր տվյալներ վնասվածքների մասին, վնասվածքների բժշկական բնութագիրը**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել վնասվածքների հասկացությունը, տարբեր եղանակներով ստացված վնասվածքները:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) վնասվածքի հասկացությունը, նրա տեսակները<br>2) սուր, ծակող, կտրող գործիքներից առաջացած վնասվածքները<br>3) փոխադրամիջոցներից առաջացած վնասվածք- | Ներկայացնում է տարբեր եղանակներով ստացված վնասվածքների հասկացությունը, նրա տեսակները, ինչպես նաև սուր, ծակող, կտրող գործիքներից առաջացած վնասվածքները, փոխադրամիջոցներից, բութ գործիքներից, բարձրությունից ընկնելուց առաջացած վնասվածքները և դատաբժշկական փորձաքննությունների | Կարողան տարբերել փոխադրամիջոցներից, բութ գործիքներից, բարձրությունից ընկնելուց առաջացած վնասվածքները և բացատրել դատաբժշկական փորձաքննությունների անցկացման կարգը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ները<br>4) բութ գործիքներից և բարձունքից վայր ընկնելուց առաջացած վնասվածքների դատաբժշկական փորձաքննությունը<br>5) հրազենային վնասվածքները | անցկացման կարգը: | |
| **6-րդ շաբաթ** | **Ընդհանուր տվյալներ վնասվածքների մասին, վնասվածքների բժշկական բնութագիրը**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը տարբեր եղանակներով ստացված վնասվածքները և դատաբժշկական փորձաքննությունների անցկացման կարգը:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) վնասվածքի հասկացությունը, նրա տեսակները<br>2) սուր, ծակող, կտրող գործիքներից առաջացած վնասվածքները<br>3) փոխադրամիջոցներից առաջացած վնասվածքները<br>4) բութ գործիքներից և բարձունքից վայր ընկնելուց առաջացած վնասվածքների դատաբժշկական փորձաքննությունը<br>5) հրազենային վնասվածքները | Ներկայացնում է տարբեր եղանակներով ստացված վնասվածքները և դատաբժշկական փորձաքննությունների անցկացման կարգը: | Իմանա վնասվածքի հասկացությունը և նրա տեսակները ու կարողանա տարբերակել սուր, ծակող, կտրող գործիքներից, փոխադրամիջոցներից, բութ գործիքներից և բարձունքից վայր ընկնելուց առաջացած վնասվածքները: |
| | **Քայլ 1** | **Հարց ու պատասխան** | | |
| **7-րդ շաբաթ** | **Դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) դատական հոգեբուժության առարկան<br>2) դատական հոգեբուժության խնդիրները<br>3) դատական հոգեբուժության փորձաքննության | Ներկայացնում է դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը: | Իմանա դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տեսակները<br>4) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները | | |
| **8-րդ շաբաթ** | **Դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը:<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) դատական հոգեբուժության առարկան<br>2) դատական հոգեբուժության խնդիրները<br>3) դատական հոգեբուժության փորձաքննության տեսակները<br>4) բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները | Ներկայացնում է դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը: | Իմանա դատական հոգեբուժության առարկան, խնդիրները, փորձաքննությունների տեսակները և բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը: |
| **9-րդ շաբաթ** | **Հոգեկան հիվանդությունների ախտանիշները**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել հոգեկան ախտանիշների հասկացությունը և ընկալման խանգարման դրսևորման ձևերը<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) հոգեկան ախտանիշների հասկացությունը<br>2) ընկալման խանգարման ձևերը<br>3) մտածողության խանգարման ձևերը<br>4) հիշողության խանգարման ձևերը | Ներկայացնում է հոգեկան ախտանիշների հասկացությունը և ընկալման խանգարման, մտածողության, հիշողության, դրսևորման ձևերը: | Իմանա հոգեկան ախտանիշների հասկացությունը և ընկալման խանգարման մտածողության, հիշողության, ձևերը դրսևորման ձևերը: |
| **10-րդ շաբաթ** | **Հոգեկան հիվանդությունների ախտանիշները**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել բանականության և հուզական ոլորտի խանգարման ձևերը<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) բանականության խանգարման ձևերը<br>2) հուզական ոլորտի խանգարման ձևերը | Ներկայացնում է բանականության, խանգարման, հուզական ոլորտի դրսևորման ձևերը: | Իմանա բանականության, խանգարման, հուզական ոլորտի դրսևորման ձևերը դրսևորման ձևերը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **11-րդ շաբաթ** | **Հոգեկան հիվանդությունների ախտանիշները**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը ընկալման, մտածողության, հիշողության, բանականության և հուզական ոլորտի խանգարումների դրսևորման ձևերը<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) հոգեկան ախտանիշների հասկացությունը<br>2) ընկալման խանգարման ձևերը<br>3) մտածողության խանգարման ձևերը<br>4) հիշողության խանգարման ձևերը<br>5) բանականության խանգարման ձևերը<br>6) հուզական ոլորտի խանգարման ձևերը | Ներկայացնում է ընկալման, մտածողության, հիշողության, բանականության և հուզական ոլորտի խանգարումների դրսևորման ձևերը: | Իմանա ընկալման, մտածողության, հիշողության, բանականության և հուզական ոլորտի խանգարումների դրսևորման ձևերը: |
| **12-րդ շաբաթ** | **Ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները և դատահոգեբուժական գնահատականը**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) ալկոհոլամոլության հասկացությունը<br>2) ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները<br>3) հարբեցողության աստիճանները | Ներկայացնում է ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները, հարբեցողության աստիճանները: | Իմանա ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները, հարբեցողության աստիճանները: |
| **13-րդ շաբաթ** | **Ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները և դատահոգեբուժական գնահատականը**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումների և հարբեցողության աստիճանները<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) ալկոհոլամոլության հասկացությունը<br>2) ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները<br>3) հարբեցողության աստիճանները | Ներկայացնում է ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները և հարբեցողության աստիճանները: | Իմանա ալկոհոլամոլության կլինիկական դրսևորումները և հարբեցողության աստիճանները: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **14-րդ շաբաթ** | **Թմրամոլության կլինի-կական դրսևորումները և դատահոգեբուժական գնահատականը**<br>Դասախոսություն /2 ժամ/ | **Տեսակը՝** դասախոսություն<br>**Նպատակը՝** ներկայացնել թմրամոլության կլինի-կական դրսևորումները<br>**Քննարկվող հարցերը՝**<br>թմրամոլությունը<br>1) թմրամոլության կլինիկական դրսևորումները | Ներկայացնում է թմրամոլության կլի-նիկական դրսևորումները: | Իմանա թմրամոլության կլինի-կական դրսևորումները: |
| **15-րդ շաբաթ** | **Թմրամոլության կլինի-կական դրսևորումները և դատահոգեբուժական գնահատականը**<br>Սեմինար /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը թմրամոլության կլինիկական դրսևորումները<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) թմրամոլությունը<br>2) թմրամոլության կլինիկական դրսևորումները | Ներկայացնում է թմրամոլության կլի-նիկական դրսևորումները: | Իմանա թմրամոլության կլինի-կական դրսևորումները: |
| **16-րդ շաբաթ** | **Թմրամոլության կլինի-կական դրսևորումները և դատահոգեբուժական գնահատականը**<br>գործնական /2 ժամ/ | **Տեսակը՝** սեմինար<br>• հարցուպատասխան<br>**Նպատակը՝** ստուգել սովորողների իմացությունը թմրամոլության կլինիկական դրսևորումները<br>**Քննարկվող հարցերը՝**<br>1) թմրամոլությունը<br>2) թմրամոլության կլինիկական դրսևորումները | Ներկայացնում է թմրամոլության կլի-նիկական դրսևորումները: | Իմանա թմրամոլության կլինի-կական դրսևորումները: |
| | **Քայլ 2** | **Հարց ու պատասխան** | | |

## ՀԱՐՑԱՇԱՐ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի ոստիկանական միջին մասնագիտական կրթության ֆակուլտետի 2-րդ կուրսի «Դատական բժշկություն և դատական հոգեբուժություն» մոդուլից անցկացվող ստուգարքի

1. Դատական բժշկություն առարկան, խնդիրները դատավարական և կազմակերպչական հիմունքները:
2. Փորձաքննության տեսակները, օբյեկտները և եղանակները:
3. Կենդանի անձանց դատաբժշկական փորձաքննություն:
4. Մարմնական վնասվածքների ծանրության աստիճանի որոշումը:
5. Դատաբժշկական վնասվածքաբանություն, հասկացողություն վնասվածքի մասին, նրա տեսակները:
6. Մահվան փաստի հաստատումը, մահվան առանձնային հաստատող նշանները:
7. Մահվան դատաբժշկական դասակարգումը,բռնի և ոչ բռնի մահ:
8. Դիակային երևույթներ:
9. Վաղ դիակային երևույթներ:
10. Ուշ դիակայի երևույթներ:
11. Անհայտ անձանց դիակների դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները:
12. Մասնատված դիակների և ոսկրային մնացորդների դատաբժշկական փորձաքննության առանձնահատկությունները:
13. Արտաշիրիմում: Էքսգումացիա: Հանկարծամահություն:
14. Դատական հոգեբուժության առարկան և խնդիրները:
15. Դատահոգեբուժական փորձաքննության տեսակները: Դատահոգեբուժական փորձաքննության կարգը:
16. Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կարգը:
17. Ընկալման և հիշողության խանգարումներ:
18. Բանականության և մտածողության խանգարումներ:

19. Հուզական և կամային ոլորտի խանգարումներ:
20. Գիտակցության խանգարումներ:
21. Ալկոհոլամոլություն, փուլերը, դատահոգեբուժական գնահատականը:
22. Հարբածության տեսակները, ախտաբանական հարբածություն:
23. Թմրամոլություն, թմրամոլության կլինիկական ձևերը, դատահոգեբուժական գնահատականը:
24. Թունամոլություն, դատահոգեբուժական գնահատականը:
25. Դեպքի վայրի զննություն: Դիակի արտաքին ուսումնասիրություն:
26. Դիակի առաջնային դատաբժշկական փորձաքննություններ: